ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **27/10/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՆԻՍՏԻ

2024 թվականի հոկտեմբերի 27-ին՝ ժամը 11:00-ին, «Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի դահլիճում տեղի ունեցավ Սիսիան համայնքի ավագանու օրենքի ուժով հրավիրված նիստը:

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, ԱԺ պատգամավորներ Նարեկ Ղահրամանյանը, Մարինա Ղազարյանը, Կարեն Համբարձումյանը, ուժային կառույցների ներկայացուցիչներ, Տաթևի վանքի վանահայր Տեր Սահակ վարդապետ Շաքարյանը, Սյունիքի մարզի համայնքների ղեկավարներ, Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցներ, համայնքում գործունեություն ծավալող դպրոցների տնօրեններ, համայնքի բնակիչներ և այլն:

Համաձայն Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կողմից ներկայացված գրանցման թերթիկի, համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Անահիտ Պետրոսյանը, Ջիվան Մարգարյանը, Դավիթ Դավթյանը, Անի Հարությունյանը, Գևորգ Դավթյանը, Մարինե Գրիգորյանը, Ավագ Ասատրյանը

<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը</u>

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Աշխատակազմի քարտուղար Կարեն Իվանյանը ողջունեց ներկա գտնվողներին և ներկայացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում համայնքի բնակիչներին տրված երդմամբ:

Ավագանու նիստը վարում էր նիստին ներկա տարիքով ավագ անդամ Սուրեն Վարդանյանը (Ավագանու անդամներից տարիքով ավագ անդամը Սուրեն Վարդանյանն էր):

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով և 74-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 27-ի օրենքի ուժով հրավիրված նիստի օրակարգը.
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Հրաչի Առաքելյանի կողմից համայնքի բնակիչներին տրվող երդման մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 088-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՍԵՓ ՀՐԱՉԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԵՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Հրաչի Առաքելյանի կողմից համայնքի բնակիչներին տրվող երդում.

   «Ստանձնելով Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

   Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

   Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:
2. Բնակիչներին տրված երդմամբ Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Հրաչի Առաքելյանը համարվում է լիազորությունները ստանձնած:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 089-Ա/

Երդման տեքստն ընթերցելուց հետո հնչեց Հայաստանի Հանրապետության օրհներգը:

Նորընտիր համայնքի ղեկավար Հ. Առաքելյանը իր շնորհակալությունը հայտնեց վստահության քվեի համար: Ավելացրեց նաև, որ առանց համախմբվածության, միասնականության, համայնքին նվիրվածության, սրտացավության չեն լուծվի համայնքի առջև ծառացած խնդիրները:

Շնորհավորական ելույթներով հանդես եկան Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, ԱԺ պատգամավոր Կարեն Համբարձումյանը, Տաթև վանական համալիրի հոգեշնորհ հայր Սահակ վարդապետը:

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը

_____